# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 15-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի 2025 թվականի փետրվարի 18-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին.

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը հողագրունտի հանույթ իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը հողագրունտի հանույթ իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

4)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում իրականացված 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսման ծրագրի հաշվետվությունը հաստատելու մասին.

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N86-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^{1}$-րդ և 60-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ սահմանված կարգի 46.2 կետի թ) ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրված օգտակար հանածոյի արդյունահանման2013 թվականի ապրիլի 05-ին տրված ՇԱԹՎ-29/311 (նախկին14/172) թույլտվությունը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2013 թվականի ապրիլի 05-ին տրված NLՎ-311 լեռնահատկացման ակտը, «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գրավոր հայտը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնք Մեղրի

1)գյուղ Կուրիս 1 հողամաս հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 253,8 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-053-0136-0016),

2)գյուղ Կարճևան 3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 89,795 33,855 հա հողամասը(կադաստրային ծածկագիր՝ 09-051-0401-0004,09-051-0409-0029),

3)գյուղ Կարճևան 5 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 3.1 հա հողամասը(կադաստրային ծածկագիր՝ 09-051-0409-0002),

4)գյուղ Կարճևան 6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «ընդերքօգտագործման հողեր» գործառնական նշանակության 82.3 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-051-0409-0003),

5)քաղաք Մեղրի 2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայի «արդյունաբերական օբյեկտների» գործառնական նշանակության 47,9956 հա հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0730-0002)

կառուցապատման իրավունքով մինչև 2027 թվականի փետրվարի 08-ը տրամադրել «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մեկ հեկտար հողամասի համար սահմանելով 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տարեկան վճար՝ ընդերքն օգտակար հանածոների արդյունահանման համար:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

**ՈՐՈՇՈՒՄ**

18 փետրվարի 2025 թվականի N 17-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 և 2019 թվականի մայիսի 10-ի N572-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը հողագրունտի հանույթ իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով՝ 1 (մեկ) տարի ժամկետով համաձայնություն տալ տրամադրելու Ռամին Իրաննեժադպալամդարին՝ հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարական աշխատանքների իրականացման համար՝ սահմանելով.

1) 09-074-0442-0001 կադաստրային ծածկագրով 4,97108 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար ամսական 149132 (հարյուր քառասունինը հազար հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ վարձավճար.

2) 09-074-0465-0005 կադաստրային ծածկագրով 0,15044 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար ամսական 45130 (քառասունհինգ հազար հարյուր երեսուն) ՀՀ դրամ վարձավճար.

3) 09-074-0441-0001 կադաստրային ծածկագրով 0,26852 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի համար ամսական 8056 (ութ հազար հիսունվեց) ՀՀ դրամ վարձավճար:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 18-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԻ ՀԱՆՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 և 2019 թվականի մայիսի 10-ի N572-Ն որոշումներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Պետական սահմանի ցամաքային անցման կետերում մաքսային սպասարկման և հսկողության վարչության, մաքսային սպասարկման և հսկողության թիվ 14 բաժնի արդիականացման և վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացման նպատակով, վարձակալության իրավունքով՝ 1 (մեկ) տարի ժամկետով, ամսական 45060 (քառասունհինգ հազար վաթսուն) ՀՀ դրամ վարձավճարով համաձայնություն տալ տրամադրելու «Թանա էներժի մանեջմենթ քոմփանի» փակ բաժնետիրական ընկերություն մասնաճյուղին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, 09-002-0153-0008 կադաստրային ծածկագրով 1,502 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից հողագրունտի հանույթ իրականացնելու համար:

2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ - 8 | Դեմ - 0 | Ձեռնպահ - 1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 19-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասին 1.1-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 04-ի N1198-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքում իրականացված 2024 թվականի համայնքային մասհանումների ծախսման ծրագրի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -8 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ |
| ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ | | |
| ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |
| ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ | | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ | | |
| ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ | | |
| ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ | | |
| ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 20-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N86-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու և Մեղրի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N2-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N86-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

| Կողմ - 8 | Դեմ - 0 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ<br>ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ<br>ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ<br>ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ<br>ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ<br>ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ<br>ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ | | ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

18 փետրվարի 2025 թվականի N 21-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մարտի 11-ը՝ ժամը 17:00-ն:

Կողմ - 9 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՂԱՄԱԼՅԱՆ ԱՆԱՀԻՏ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐՈՒՍՅԱ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՄԱՐՅԱՄ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2025 թվականի փետրվարի 18
ք.Մեղրի